25

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/38

ք.Երևան «25» սեպտեմբերի 2018թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ.Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինհայ-ՊՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Շենգավիթ և Նոր Նորք վարչական շրջանների բակային տարածքներում մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **համաձայն հավելված 2-ի**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր:** Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **17 787 600** (**Տասնյոթ միլիոն յոթ հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր**) ՀՀ դրամ, որից **2 964 600 (Երկու միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին **8 589 600 (Ութ միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ՝ որից **1 431 600 (Մեկ միլիոն չորս հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին **9 198 000 (Ինը միլիոն հարյուր իննսունութ հազար)** ՀՀ դրամ՝ որից **1 533 000 (Մեկ միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
Երևանի քաղաքապետարան	«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի 1	Ք.Երևան, Բաշինջաղյան 178 շ. բն.2
Կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
ՀՀ 900012410412	ՀՀ 11500716795667
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01239894
Գ.Չթրյան----------	----------
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

1

Հավելված թիվ 1
« » 09 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բակային տարածքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքներ

h/h	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գինը	Ամբողջը
1	2	3	4	5	6
	1. Քանդման աշխատանքներ				
1	Բետոնե եզրաքարերի քանդում (17x30սմ),բետոնե հիմքերի հետ միասին	100գ/մ	0.250	61.739	15.435
2	Գոյություն ունեցող մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում (լուս.հենասյուն,նստարաններ)	տ	0.70	29.295	20.506
3	III կարգի բնահողի քանդում փոսորակներում ձեռքով,մարզադաշտի ցանկապատի հիմքերի տեղադրման համար	$մ^3$	5.50	3.054	16.799
4	III կարգի բնահողի քանդում խրամուղիներում ձեռքով,եզրաքարերի տեղադրման համար	$մ^3$	6.00	2.429	14.571
5	Տարածքը մաքրել շին աղբից	տ	29.30	1.137	33.301
6	Շին աղբը բարձել և տեղափոխել մինչև 12կմ	տ	29.30	2.307	67.589
7	Նույնը՝մետաղական կոնստրուկցիաների համար, մինչև 1կմ/վերադարձ/	տ	0.70	0.836	0.585
	Ընդամենը 1-ով				168.786
	2. Բարեկարգում				
1	Բետոնե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափի, բետոնե հիմքերի հետ միասին,բետոն B12.5 դասի	100գ/մ	0.320	461.035	147.531
2	Բետոնե հավաքովի եզրաքարերի տեղադրում 80x200մմ չափի,բետոնե հիմքերի հետ միասին,բետոն B12.5 դասի	100գ/մ	0.650	244.365	158.837
3	Անցուղիներում ասֆալտաբետոնե ծածկույթի տակ տոփանված խճե շերտի իրականացում հմիջ.=100մմ հաստ.,տոգորված բիտումե մածիկով	$100մ^2$	1.35	177.309	239.367

4	Նույնի՝ ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում,40 մմ հաստությամբ	100մ^2	1.35	256.833	346.724
5	Մարզադաշտում ասֆալտաբետոնե ծածկույթի տակ տոփանված խճե շերտի իրականացում հմիջ.=100մմ հաստ.,տոգորված բիտումե մածիկով	100մ^2	3.85	177.309	682.638
6	Նույնի՝ ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում,40 մմ հաստությամբ	100մ^2	3.85	256.793	988.653
7	Արհեստական խոտածածկ	մ2	385.00	3.508	1,350.698
8	Մաղած ավազ	մ^3	7.50	5.575	41.813
9	Ներկանյութ գծանշումների համար	կգ	5.00	1.228	6.142
	Ընդամենը 2-ով				**3,962.403**
	3. Աղբաման (4 հատ)				
1	Աղբամանների մոնտաժում և տեղադրում 4մմ հաստության պողպատե թիթեղից	տ	0.062	420.415	26.066
2	Նույնը՝ ուղղանկյուն խողովակներից	տ	0.0112	58.502	0.655
3	Ուղղ. խողովակ 20x30x1.5մմ	գ/մ	6.120	0.629	3.849
4	Նույնը՝ 10x15x1.0մմ	գ/մ	4.400	0.383	1.686
5	Աղբամանների բետոնե հիմքերի իրականացում,B12.5 դասի բետոնով	մ3	0.052	35.395	1.841
6	Նույնի՝ներկում յուղաներկով	տ	0.0730	9.312	0.680
	Ընդամենը 3-ով				**34.777**
	4. Նստարան (4 հատ)				
1	Նստարանների մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում քառակուսի խողովակներից	տ	0.226	54.238	12.258
2	Ուղղանկյուն խողովակ 40x40x4.0մմ	գ/մ	50.40	1.710	86.181
3	Նստարանների փայտե դետալներ տեղադրում,40x80մմ փայտե չորսուներով	մ3	0.27	190.111	51.330
4	Նույնի ոտքերի բետոնացում ,B7.5 դասի բետոնով	մ^3	0.30	27.097	8.129
5	Ամրան A 500c-ф18	կգ	9.60	0.339	3.255
6	Մետաղական մակերեսների ներկում	տ	0.226	9.312	2.105

7	Փայտե մակերեսների ներկում	100մ2	0.21	31.568	6.629
	Ընդամենը 4-ով				169.886
	5. Ցանկապատ 1 և 2				
1	Ցանկապատերի հիմքերի բետոնե նախապատրաստական շերտի իրականացում,B7.5 դասի բետոնով	մ3	2.00	26.584	53.168
2	Բետոնե հիմքերի իրականացում մետաղական ցանկապատի կանգնակների տակ,B15 դասի բետոնով	մ3	4.000	41.868	167.470
3	Մետաղական կանգնակների և հեծանների մոնտաժում պողպատե խողովակներից	տ	1.463	105.049	153.686
4	Մետաղական խողովակներ 120x80x4մմ	գ/մ	105.70	4.749	502.020
5	Մետաղական խողովակներ 80x80x5մմ	գ/մ	4.40	3.607	15.869
6	Մետաղական խողովակներ 100x70x5մմ	գ/մ	5.40	4.039	21.810
7	Մետաղական խողովակներ 70x50x5մմ	գ/մ	6.00	3.243	19.458
8	Մետաղական անկյունակներ L50x50x5մմ	գ/մ	12.00	1.687	20.248
9	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.2490	59.695	14.864
10	Ամրան A 500c-ф12	կգ	51.10	0.339	17.325
11	Պողպատե թիթեղ -8x250x300մմ	$մ^2$	3.15	26.762	84.302
12	Ցանկապատի վերամշակված տախտակների մոնտաժում	մ3	3.76	202.294	760.626
13	Վերամշակված տախտակների ծեփամածկում և ներկում	մ2	282.0	1.108	312.515
14	Գունավոր հարթ թիթեղների մոնտաժում,0.5 մմ հաստությամբ,120 մմ և 360 մմ լայնություններով, 8.5 ք.մ.	տ	0.0334	890.284	29.735
15	Մետաղական մակերեսների ներկում	տ	1.661	9.304	15.454
16	Մակերեսի երեսապատում 30 մմ հաստությամբ տախտակով	մ2	2.160	5.742	12.403
17	Նույնի պատում լամինատե թերթատախտակով 1800x1200x10մմ	մ2	2.160	5.779	12.484
18	Բասկետբոլի օղակ ցանցով	հատ	2.0	7.862	15.724
19	Վոլեյբոլի ցանց- 1հատ	մ2	14.6	1.228	17.935

20	Ֆուտբոլի դարպասի ցանց-2հատ	մ2	10.5	3.046	31.988
21	Վոլեյբոլի ցանցի խողովակների մոնտաժում	տ	0.048	35.114	1.692
22	Մետաղական մակերեսների ներկում	տ	0.048	9.207	0.442
	Ընդամենը 5-ով				**2,281.218**
	6. էլեկտրական լուսավորություն (4 հատ)				
1	Փոսորակի փորում մետաղական հենասյուների տակ 3-րդ կարգի	$մ^3$	2.60	3.054	7.941
2	Բետոնե հիմքերի իրականացում հենասյուների տակ,B12.5 դասի	$մ^3$	0.64	39.998	25.599
3	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.0290	59.695	1.731
4	Ամրան A 500c-ф16	կգ	6.32	0.339	2.143
5	Պողպատե թիթեղ -3x140x140մմ	$մ^2$	0.156	10.028	1.564
6	Հողի հետլիցք ձեռքի աշխատանք	$մ^3$	2.00	0.834	1.669
7	Ավելորդ հողի բարձում ինքնաթափը	$մ^3$	1.00	0.611	0.611
8	Տեղափոխել թափոնատեղ	տ	1.60	1.895	3.032
9	Մետաղական սյուների մոնտաժում Ø133x4 խողովակից L=7.0 գ/մ	հատ	4.00	45.600	182.399
10	Սյուների վրա բարձակների տեղադրում Ø40x3 խողովակներից	տ	0.0109	81.347	0.887
11	Խողովակներ Ø40x3.0	գ/մ	6.400	1.161	7.428
12	Լայնակ մեկուսիչի տեղադրման համար,պողպատե անկյունակ L 40x40x4 մմ	գ/մ	2.400	1.090	2.616
13	Ցցաձող մեկուսիչի տեղադրման համար, Ш-16-К-25	հատ	16.000	0.590	9.434
14	Մեկուսիչ,ТФ -20 01	հատ	4.000	0.393	1.572
15	Լուսատու լուսադիոտային լամպերով 60 վտ.	հատ	4.00	20.453	81.811
16	Ճոպան ցինկապատ պողպատից, Ø6.2 մմ	գ/մ	94.00	0.238	22.336

17	Ճոպանասարքային մեկուսիչ ИТ-30	հատ	8	1.523	12.186
18	Ճոպանի սեղմակներ 6.2 մմ	հատ	8	0.848	6.781
19	Կախել АВВГ մալուխը 3*6մմ² օդային	100մ	0.94	113.828	106.998
20	Անցկացնել հաղորդալար ППВ 2x2.5մմ²	100մ	0.08	45.758	3.661
21	Միացում գործող գծին	տեղ.	1.00	54.284	54.284
22	Նույնի՝ ներկում (ներառյալ բարձակները)	տ	0.095	44.723	4.249
	Ընդամենը 6-ով				540.930
	Ընդամենը 1-6-ով				7,158.000
	ԱԱՀ 20%				1,431.600
	Ընդամենը				8,589.600

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանների բակային տարածքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքներ

հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գինը	Ամբողջը
1	2	3	4	5	6
	1. Քանդման աշխատանքներ				
1	Բետոնե եզրաքարերի քանդում (15x30սմ),բետոնե հիմքերի հետ միասին	100գ/մ	0.800	61.766	49.413
2	Գոյություն ունեցող մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում (նստարան-3հատ,մետաղական խողովակներ)	տ	0.40	29.307	11.723
3	III կարգի բնահողի քանդում փոսորակներում ձեռքով,մարզադաշտի ցանկապատի հիմքերի տեղադրման համար	մ^3	5.50	3.056	16.806
4	III կարգի բնահողի քանդում խրամուղիներում ձեռքով,եզրաքարերի տեղադրման համար	մ^3	2.00	2.430	4.859
5	Տարածքը մաքրել շին աղբից	տ	29.60	1.137	33.657
6	Շին աղբը բարձել և տեղափոխել մինչև 12կմ	տ	29.60	2.308	68.311
7	Նույնը՝մետաղական կոնստրուկցիաների համար, մինչև 1կմ/վերադարձ/	տ	0.40	0.837	0.335
	Ընդամենը 1-ով				185.103
	2. Բարեկարգում				
1	Բետոնե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափի, բետոնե հիմքերի հետ միասին,բետոն B12.5 դասի	100գ/մ	1.000	461.235	461.235

2	Բետոնե հավաքովի եզրաքարերի տեղադրում 80x200մմ չափի,բետոնե հիմքերի հետ միասին,բետոն B12.5 դասի	100գ/մ	0.360	244.471	88.010
3	Անցուղիներում ասֆալտաբետոնե ծածկույթի տակ տոփանված խճե շերտի իրականացում հմիջ.=100մմ հաստ.,տոգորված բիտումե մածիկով	100մ^2	1.47	177.386	260.757
4	Նույնի՝ ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում,40 մմ հաստությամբ	100մ^2	1.47	256.944	377.708
5	Մարզադաշտում ասֆալտաբետոնե ծածկույթի տակ տոփանված խճե շերտի իրականացում հմիջ.=100մմ հաստ.,տոգորված բիտումե մածիկով	100մ^2	3.60	177.386	638.588
6	Նույնի՝ ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում,40 մմ հաստությամբ	100մ^2	3.60	256.944	924.998
7	Երրորդ կարգի բուսահողի քանդում ռեզերվում էքսկավատորով,բարձելով ինքնաթափը	1000մ^3	0.0824	99.073	8.164
8	Սնահողը տեղափոխել տեղամաս 12կմ	տ	131.80	1.971	259.762
9	Հողի հետլիցք սիզամարգերում, ձեռքով	100մ^3	0.82	64.574	53.209
10	Սնահողի փռում ձեռքով սիզամարգերում/սնահող-82.4 խ.մ./,100մմ հաստությամբ,որի 20% կարմիր ավազի խառնումով,առանց կարմիր ավազի արժեքի	100մ^2	1.03	9.826	10.121
11	Կարմիր ավազ, սնահողի համար	մ^3	20.60	3.736	76.961
12	Արհեստական խոտածածկ	մ2	360.00	3.008	1,083.033
13	Մաղած ավազ	մ^3	7.20	5.577	40.158
14	Ներկանյութ գծանշումների համար	կգ	5.00	1.229	6.145
15	Գոյություն ունեցող ցանկապատի վերանորոգում,մետաղական անկյունակներով	տ	0.104	47.269	4.916
16	Մետաղական անկյունակ-50x50x3մմ	գ/մ	30.0	1.127	33.801
17	Մետաղական մակերեսների ներկում հակակոռոզիոն ներկով, 2 անգամ	100մ2	0.600	74.152	44.491
	Ընդամենը 2-ով				**4,372.055**
	3. Աղբաման (4 հատ)				
1	Աղբամանների մոնտաժում և տեղադրում 4մմ հաստության պողպատե թիթեղից	տ	0.062	406.146	25.181
2	Նույնը՝ ուղղանկյուն խողովակներից	տ	0.0112	55.283	0.619
3	Ուղղ. խողովակ 20x30x1.5մմ	գ/մ	6.120	0.629	3.851
4	Նույնը՝ 10x15x1.0մմ	գ/մ	4.400	0.383	1.687

5	Աղբամանների բետոնե հիմքերի իրականացում,B12.5 դասի բետոնով	մ3	0.052	29.643	1.541
6	Նույնի՝ներկում յուղաներկով	տ	0.0730	6.457	0.471
	Ընդամենը 3-ով				33.351
	4. Նստարան (6 հատ)				
1	Նստարանների մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում քառակուսի խողովաներից	տ	0.226	54.262	12.263
2	Ուղղանկյուն խողովակ 40x40x4.0մմ	գ/մ	50.40	1.711	86.218
3	Նստարանների փայտե դետալներ տեղադրում,40x80մմ փայտե չորսուներով	մ3	0.27	190.369	51.400
4	Նույնի ոտքերի բետոնացում ,B7.5 դասի բետոնով	$մ^3$	0.30	27.109	8.133
5	Ամրան A 500c-փ18	կգ	9.60	0.339	3.256
6	Մետաղական մակերեսների ներկում	տ	0.226	9.317	2.106
7	Փայտե մակերեսների ներկում	100մ2	0.21	31.582	6.632
	Ընդամենը 4-ով				170.007
	5. Ցանկապատ 1 և 2				
1	Ցանկապատերի հիմքերի բետոնե նախապատրաստական շերտի իրականացում,B7.5 դասի բետոնով	մ3	2.00	26.595	53.191
2	Բետոնե հիմքերի իրականացում մետաղական ցանկապատի կանգնակների տակ,B15 դասի բետոնով	մ3	5.00	41.886	209.429
3	Մետաղական կանգնակների և հեծանների մոնտաժում պողպատե խողովակներից	տ	1.463	105.094	153.753
4	Մետաղական խողովակներ 120x80x4մմ	գ/մ	105.70	4.752	502.238
5	Մետաղական խողովակներ 80x80x5մմ	գ/մ	4.40	3.608	15.876
6	Մետաղական խողովակներ 100x70x5մմ	գ/մ	5.40	4.041	21.820
7	Մետաղական խողովակներ 70x50x5մմ	գ/մ	6.00	3.244	19.466
8	Մետաղական անկյունակներ L50x50x5մմ	գ/մ	12.00	1.688	20.257
9	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.2490	59.721	14.870
10	Ամրան A 500c-փ12	կգ	51.10	0.339	17.332
11	Պողպատե թիթեղ -8x250x300մմ	$մ^2$	3.15	26.774	84.338
12	Ցանկապատի վերամշակված տախտակների մոնտաժում	մ3	3.93	202.195	794.627
13	Վերամշակված տախտակների ծեփամածկում և ներկում	մ2	300.0	1.110	332.914

14	Գունավոր հարթ թիթեղների մոնտաժում,0.5 մմ հաստությամբ,120 մմ և 360 մմ լայնություններով, 8.5 ք.մ.	տ	0.0334	891.492	29.776
15	Մետաղական մակերեսների ներկում	տ	1.497	9.317	13.947
16	Մակերեսի երեսապատում 30 մմ հաստությամբ տախտակով	մ2	2.160	5.745	12.409
17	Նույնի պատում լամինատե թերթատախտակով 1800x1200x10մմ	մ2	2.160	5.782	12.489
18	Բասկետբոլի օղակ ցանցով	հատ	2.0	7.865	15.730
19	Վոլեյբոլի ցանց- 1հատ	մ2	14.6	1.229	17.942
20	Ֆուտբոլի դարպասի ցանց-2հատ	մ2	10.5	3.048	32.001
21	Վոլեյբոլի ցանցի խողովակների մոնտաժում	տ	0.048	35.129	1.693
22	Մետաղական մակերեսների ներկում	տ	0.048	9.211	0.442
	Ընդամենը 5-ով				2,376.542
	6. էլեկտրական լուսավորություն (4 հատ)				
1	Փոսորակի փորում մետաղական հենասյուների տակ 3-րդ կարգի	$մ^3$	2.60	3.056	7.945
2	Բետոնե հիմքերի իրականացում հենասյուների տակ,B12.5 դասի	$մ^3$	0.64	40.021	25.614
3	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.0290	59.721	1.732
4	Ամրան A 500c-ф16	կգ	6.32	0.339	2.144
5	Պողպատե թիթեղ -3x140x140մմ	$մ^2$	0.156	10.032	1.565
6	Հողի հետլիցք ձեռքի աշխատանք	$մ^3$	2.00	0.835	1.669
7	Ավելորդ հողի բարձում ինքնաթափը	$մ^3$	1.00	0.611	0.611
8	Տեղափոխել թափոնատեղ	տ	1.60	1.896	3.033
9	Մետաղական սյուների մոնտաժում Ø133x4 խողովակից L=7.0 գ/մ	հատ	4.00	45.629	182.514
10	Սյուների վրա բարձակների տեղադրում Ø40x3 խողովակներից	տ	0.0109	81.382	0.887
11	Խողովակներ Ø40x3.0	գ/մ	6.400	1.161	7.431
12	Լայնակ մեկուսիչի տեղադրման համար,պողպատե անկյունակ L 40x40x4 մմ	գ/մ	2.400	1.090	2.617
13	Ցցաձող մեկուսիչի տեղադրման համար, Ш-16-К-25	հատ	16.000	0.590	9.438
14	Մեկուսիչ,ТФ -20 01	հատ	4.000	0.393	1.573
15	Լուսատու լուսադիոտային լամպերով 60 վտ.	հատ	4.00	20.462	81.847

16	Ճոպան ցինկապատ պողպատից, Ø6.2 մմ	գ/մ	80.00	0.238	19.034
17	Ճոպանասարքային մեկուսիչ ИТ-30	հատ	8	1.524	12.191
18	Ճոպանի սեղմակներ 6.2 մմ	հատ	8	0.848	6.784
19	Կախել АВВГ մալուխը 3*6մմ² օդային	100մ	0.80	113.974	91.179
20	Անցկացնել հաղորդալար ՊՊՎ 2x2.5մմ²	100մ	0.08	45.778	3.662
21	Միացում գործող գծին	տեղ.	1.00	54.316	54.316
22	Նույնի՝ ներկում (ներառյալ բարձակները)	տ	0.23	44.743	10.157
	Ընդամենը 6-ով				527.942
	Ընդամենը 1-6-ով				7,665.000
	ԱԱՀ 20%				1,533.000
	Ընդամենը				9,198.000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410412
ՀՎՀՀ 02593108

Գ.Զթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ
Ք.Երևան, Բաշինջաղյան 178 շ. բն.2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
ՀՀ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«25» 09 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«Երևան քաղաքի Շենգավիթ և Նոր Նորք վարչական շրջանների բակային տարածքներում մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման» **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	***Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Նորագավիթ թաղ. 8-րդ փողոցի հարակից թիվ 67 դպրոցի և թիվ 31 մանկապարտեզի մինչև ընկած տարածքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքներ***	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30-օրացուցային օր
2	***Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Նանսենի 21/3 հասցեի հարակից տարածքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքներ***	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30-օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410412
ՀՎՀՀ 02593108

Գ.Չթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ
Ք.Երևան, Բաշինջաղյան 178 շ. բն.2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
ՀՀ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«25» 09 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211140	***Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Նորագավիթ թաղ. 8-րդ փողոցի հարակից թիվ 67 դպրոցի և թիվ 31 մանկապարտեզի մինչև ընկած տարածքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքներ***		8 589 600	8 589 600	8 589 600	8 589 600	8 589 600
2	45211140	***Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Նանսենի 21/3 հասցեի հարակից տարածքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքներ***		9 198 000	9 198 000	9 198 000	9 198 000	9 198 000
		ԸՆԴԱՄԵՆԸ		**17 787 600**	**17 787 600**	**17 787 600**	**17 787 600**	**17 787 600**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410412
ՀԿՀՀ 02593108

Գ.Հթոյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ
Ք.Երևան, Բաշինջաղյան 178 շ. բն.2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
ՀՀ 11500716795667
ՀԿՀՀ 01239894

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«25» 09 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«25» 09 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն